

«Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության և էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»:

Հովհաննես Թումանյան

ԱՐԴԻ ՃԱՅԵՐԵԵԻ ՃԻՄՆԱԽՆԴԻՈՆԵՐԻՆՆՎԻՈՎԱՕ
ԱԻՑԱՅԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

bnjbtfpbp 18-19,2015

Կազմեցին և խմբագրեցին

ԼԻԼԻԹ ԳԱԼՍՅԱՆԸ
ՅՈՒՐԻ ԱԿԵՏԻՍՅԱՆԸ



zuvua«u3hb
/из ԿՈՅԱԿԱՆ
M ԱՃԱԿՈՒԹՅՑԻ
ИМШЭЗМЪ



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՃԱՄԱԿԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ
2016

ՔՏԴ 811.19:06
ԳՄԴ 81.22,
Ա 858

Ժողովածուն հրատարակվում է «Արդի հայերենի հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի կազմկոմիտեի երաշխավորությամբ

Ա 858 Արդի հայերենի հիմնախնդիրներ: Գիտաժողովի նյութեր: Կազմեցին ն խմբագրեցին Լիլիթ Գալստյանը ն Յուրի Ավետիսյանը- Եր.: համազգային հայ կրթական ն մշակութային միություն, 2016. 182 էջ:

Կազմկոմիտե

Արամ Միմոնյան
Լիլիթ Գալստյան
Արծրուն Ավագյան
Յուրի Ավետիսյան
4արդան Պետրոսյան
Աննա Աբաջյան
Անահիտ Տոեապնայան

Ժողովածուում զետեղված են Երևանի պետական համալսարանի ն Համազգային հայ կրթական ն մշակութային միության նախաձեռնությամբ 2015 թ. նոյեմբերի 18ին ե 19-ին տեղի ունեցած «Արդի հայերենի հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերը: Այն կարող է օգտակար լինել բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվումեն հայերենագիտությամբ:



iuinu<iii3Mi
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՈՒԿՆԻԹՅՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
HAMAZGAYIN
ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY
www.hamazkayin.com

ISBN: 978-9939-9098-3-7

© ՎԱՄՍՕՒԿՅՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՈՒԿՆԻԹՅՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, 2016

Արդի հայերենի հիմնախնդիրներին նվիրված այս գիտաժողովը նպատակ ուներ համակողմանիորեն և արդիական չափանիշներով արժևորելու հայերենի լեզվավիճակը, անդրադառնալու պետական լեզվաքաղաքականությանը, ինչպես նաև հայոց լեզվի պահպանման, զարգացման և տարածման հիմնախնդիրներին: Հասկանալի է, որ ժողովածուում ամփոփված զեկուցումները չեն կարող համակողմանիորեն արտացոլել գիտաժողովում նախանշված խնդիրների շրջանակը: Այս տեսակետից թերևս կարելի է առանձնացնել զեկուցումների երեք խումբ: Առաջին խմբի զեկուցումները (մեր տպավորությամբ դրանք մեծ թիվ չեն կազմում) հարցադրումների բնույթով ու բովանդակությամբ մասամբ են առնչվում գիտաժողովի բուն նպատակին ու ոգուն: Երկրորդ խմբի զեկուցումները (դրանք քանակով նույնպես շատ չեն), մնալով գիտաժողովի նպատակների շրջանակում, այդուհանդերձ քննարկման առարկա են դարձնում առավելապես մասնագիտական նեղ խնդիրներ: Երրորդ խումբը, որը թերևս ներառում է զեկուցումների գերակշիռ մասը, արտահայտում է գիտաժողովի հիմնական էությունն ու բովանդակությունը: Մակայն անկախ մատանշված որակներից և գիտաժողովի ծրագրին արձագանքելու չափից բոլոր զեկուցումներն էլ առանձնանում են մեկ ընդհանուր և կարևոր հատկությամբ, դրանք տոգորված են հայերենի լեզվավիճակը գնահատելու, ծագած խնդիրները վեր հանելու և ողջամիտ լուծումներ առաջարկելու մասնագիտական անկեղծ մտահոգությամբ:

Գիտաժողովը, բնականաբար, հավակնություններ չի ունեցել քննարկվող խնդիրներին ավարտուն և անվերապահ լուծումներ տալու կամ առաջարկելու դրանց լուծման պատրաստի բանաձևեր: Մակայն գիտական այս կարգի յուրաքանչյուր ձեռնարկ պսակվում է հաջողությամբ, եթե հնչած զեկուցումներն ու դրանց շուրջ ծավալված քննարկումները ի վերջո ծնում են որոշակի վերաբերմունք և մոտեցումներ, որոնք նպաստում են հարցի վերաբերյալ ամբողջական տեսակետի ձևավորմանը: Իսկ դա իր հերթին ամուր հարթակ է նպատակային լեզվաքաղաքականություն մշակելու, հայոց լեզվի հիմնախնդիրները հաջողությամբ լուծելու համար:

Այս գիտաժողովը, կարծում ենք, հաջողվածներից է:

ՈՂԳՈՒՅՆ ԽՈՍՔ

Նախ ուզում ես ողջունել այս նախաձեռնությունը, որը ակադեմիական է և միաժամանակ համազգային: Պատահական չէ, որ կազմակերպիչներն են համահայկական կառույց հանդիսացող Համազգային հայ կրթական և մշակութային միությունը և ակադեմիական մեր առաջատար հաստատությունը՝ Երևանի պետական համալսարանը:

Արդի հայերենի խնդիրների մասին երկու օր խոսելը քիչ է: Խնդիրներն իրականում կուտակվել են տարիներ շարունակ, կուտակվել են ինչպե՛ս Հայաստանում, այնպես էլ՝ Հայաստանից դուրս: Մարտահրավերները շատ են՝ սկսած այն հանգամանքից, որ, ավաղ, հայ բանասիրությունը առհասարակ երիտասարդների համար գիտակրթական գրավիչ ուղղություն չէ:

Մեծ է նաև ոչ հայախոս հայերի ուժացման վտանգը Միջուռում:

Շատ են նաև արևմտահայերենին վերաբերող խնդիրները: Պետք է ազնվորեն խոստովանենք, որ հայերենի հիմնական խնդիրը հենց Հայաստանում է և պայմանավորված է լեզվաբանական հարցերով, լեզվի կանոնաբեկման չգոյությունը, լեզվական այն աղավաղումներով, որոնց մեկն ականատես ենք լինում վերջին տարիներին:

Խոստովանենք, որ շատ մեծ դերակատարություն ունի դպրոցը: Հայերենը դպրոցական ծրագրերում գրավիչ առարկա չէ. մայրենին չափից ավելի ծանրաբեռնված, չափից ավելի անհետաքրքիր առարկա է դարձել հատկապես թեստային ֆունկցիաների համատեքստում: Մեր երիտասարդներին չենք խրախուսում հայերենի իմացության համար, չենք բացահայտում հայերենի իրական հարստությունն ու գաղտնիքները, այլ փորձում ենք շեղարկումներ անել թեստային կամ այլ ֆունկցիաների վրա: Հայերենը չպետք է դառնա դասական արժեք, որը բուլսը պաշտում են, բայց աղավաղում գործածելիս:

Երկօրյա գիտաժողովի ընթացքում վերջնական վերլուծություն և գնահատականներ տալը դժվար է, բայց այս ուղղությամբ ձեռնարկվող փոփոխություններն անշուշտ պետք է համախմբեն ոչ միայն մասնագետներին, այլև ուրբտի կառավարիչներին: Քաղաքական որոշումների խնդիր է ծագում, որոնց հիմնավորումները նախ պետք է մասնագետները տան: Ակնկալում ենք, որ այսպիսի համաժողովների

արդյունքում ձևավորված գիտական միտքը իրապես կլինի կիրառական, օգտակար և հնարավորինս թույլ կտա թեթևացնել մասնագիտական և ակադեմիական շրջանակներում գոյություն ունեցող մտահոգությունները:

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍ ՅԱՆ (Հայաստան)
Բանասիրական գիտությունների դոկտոր

ԿԱՆՈՆԱՐԿՈՒՄԵ ՈՐՊԵՍ ԼԷՉՎԱՔԱՆԴԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՃԿՆԱԿԱՆ ԳԻՏՈՒՄՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ

1. Կանոնադրույնը որպես լեզվաբանական գիտություն: Քրական լեզվի կանոնադրույնը լեզվաբանական գիտության առաջնային և իմնական ուղղություններից է: Լեզվի զարգացման ընթացքում պարբերաբար ծագում է կանոնների մշակման ու ամրագրման արգը: Կանոնը [եզուն պաշտպանում է ավելորդ թափանցումները] ու պատահականություններից, լեզվակիր սոցիալական խմբի կամ յնհատիկության ձևավորմանը ազդեցություններից, ապահովում է յզգային լեզվի կայունությունը և ինֆորմացիայությունը:

Սա բարդ ու հակասական գործընթաց է. մի կողմից ձգտում է պահպանելու լեզվական նորմը, զսպելու հանախակի և չպատճենված փոփոխությունները, լեզվի մշակության ու զարգացման հիմնական նախապայման է սահմանում էթնոփոփոխությունների ենթակետերը, մյուս կողմից՝ ենթադրում է տեղաշարժեր և զուր-Ասցում, ֆանի որ խստորոշ և անվերապահ կանոններ սահմանելը և ստացում է լեզուն, գրկում նրան հիանալիությունից:

Կանոնադրման բնական ընթացքը ձևավորվում է այս երկու ուղիների ներդրման համադրությամբ: Լինում են նաև ծայրահեղ դիրքորոշման դրոշակակիրներ: Լեզվաբանների մի մասը մեզայնում որդեգրել է խիստ պահպանողական մոտեցում, հատկապես յավուզին է տանում օտար բառերի մուտքը հայերեն, մերժում է սրտասանության մեջ և ֆերականական իրողություններում կառարված ակնհայտ տեղաշարժերը, դժկամությամբ է հանդուրժում անգամ Տերմինաբանական կոմիտեի նաև ողջամիտ որոշումները: Չրինակ՝ տերմին բառի գործածությունը հանձնարարված է հստակ նախագծով, բայց լեզվակիր սոցիալների մի որոշակի հատված այնուս հետևողականությամբ դրա փոխարեն շրջանառում է եզր, «գրույթ, եզրուբառ, բառեզր, գիտաբառ և էլի մի ֆանի նման բառեր:

Մասնագետների մեկ այլ խումբ յուրօրինակ մրցավազքի մեջ նորմավորողի անխոցելի պատմության հագած ժամ առաջ փորում է արձանագրել նոր տեղաշարժեր ու զարգացումներ և դրանք ւշուշուկե որպես անվերապահ կանոն և օրինաչափություն: Լեզվաբանական քաղաքական սխալը մատուցվում է իբրև ընդունելի տարբերակ: յայն այն փաստարկունով, որ իբրև թե խոսակցական լեզվում այն տարածում ունի: Բանը հասել է այնտեղ, որ հայերենի զարգացման ու կանոնակարգման գործի պատասխանատուն հրապար-

րակալով հայտարարում է, թե որ շաղկապի փոխարեն կարելի է գործածել **որպեսզի**-ն, քանի որ առաջինը՝ **որ**-ը, գործածականությամբ ծանրաբեռնված է: Հայերենում մենք ունենք ավելի ծանրաբեռնված բառեր **հաց, տուն, մայր, եղբայր**, ինչն՝վ փոխարինենք դրանք:

Կանոնակարգման օբյեկտիվ ֆաղափականության մեջ ծայրահեղություններն անընդունելի են: Լեզվաբանի խնդիրն այն է, որ լեզվի կանոնարկմանը նպաստի իր մասնագիտական հմուտ գիտարկումներով, խելամիտ առաջարկություններով, մեկնաբանություններով ու բառարաններով, և այդ գործին ձեռք արկանի միայն այն դեպքում, երբ լեզվագործածությունը համառոտ են ու անխնայախում է նրա դուրը: Իբրև ելակետ պիտի ունենա նորմավորման հիմնական սկզբունքները՝ լեզվական միջոցի գործածականություն, համապատասխանություն լեզվական օրինաչափություններին, լեզվական ավանդույթ, ձևային-արտասանական հատկանիշներ, գործառական ֆունկցիան և այլն:

Լեզվաֆաղափականության պարտադրանքներինց ազատ չէ առավել ևս բուհական կամ դպրոցական դասագրքի հեղինակը: Նորմատիվ էրականության դասագրքերում պիտի արձանագրվեն միայն հանրահայտ կանոններ ու օրինաչափություններ: Հակառակ դեպքում՝ իրարամերժ կարծիքներն ու ձևակերպումները անխուսափելի են:

Հանրակրթական դպրոցների հիմնգերարդ դասարանի հայոց լեզվի դասագիրքը **կ** և **չ** մասնիկներից հետո օրենք ու կանոն է հանաչում **է** և **Օ** ձայնավորների **յէ** և **վօ** արտասանությունը՝ **կ[ըէ]ՐԳեն, կ[ըվօ]րսան, չ[ըվօ]րոնեն**¹, իսկ մյուս դպրոցական ու բուհական դասագրքերը կամ լուռ են, կամ հանձնարարում հակառակ արտասանությունը **կ[է]րգեն, չ[օ]րոնեն, չ[օ]րսան**: Մի դասագիրքը գրել բայի հոգնակի հրամայականի համար կանոն է ձևակերպում գրեցե՛ք ձևը, մյուսը գրե՛ք-ը, մի ձեռնարկում կա՛ց, մի՛ կաց, գարկի՛ր, գիտեցի՛ր բայ-բայածները համարվում են հնացած և անգործածական, մյուսում դրանք գիտվում են նորմատիվ կազմություններ, և այսպես շարունակ:

Լեզվի կանոնարկման հարցերը փորձաֆար են եղել շատերի համար: Վրիպել են նաև այնպիսի անհատականություններ, ինչպիսիք են Աբեղյանը, Ահառյանը, Տեղյանը և ուրիշներ: Դրանից ապահովագրված չէ նույնիսկ Հայերենի բարձրագույն խորհուրդը, երբ գործում է առանձնաբար կամ բանիմաց մեկի չպատճառաբանված հայեցողությամբ: Ապացույցը Լեզվի տեսչության այն որոշումներն են, որոնք տերմինաբանական տեղեկատուի վերջին հատորյակ փո-

¹ Տե՛ս Դ. Գյուրջինյան, Թ. Ալեխանյան, Ա. Գալստյան, Մայրենի, եր., 2006:

խահցվեցին կազմող-խմբագրի բարեհան թողտվությամբ կամ հապ []
ԴԱԿ սրբագրվեցին նույն խմբագրի թերև ձեռամբ, ինչպես օրինակ՝
Ա.1Մ ի վոխուսրինումը **ՉՏՄ**-ով¹, մեխանիկ բուհական մուսուսագիտութ-
 ևիւյ անվանման մեխանիկոս հորջորջումը (**221**), **ԱՄ**ըՆը հապավումի
ԱՄըՆ արտասանությունը (**190**), մի շարք բառերում տողադարձի
 ժամանակ ավելորդ ը-ի ներմուծումները՝ մոտեցը-նել, վագեցը-նել
 ս%), բառի գրային պատկերը խաթարող հոլովական ուարբերակ-
 (ւելի կոու, Գյումրու, կոուվ, կոուց օրինականցումը (**229**) փոխա-
 հակ կոիի, Գյումրիի, կոիով, կոիից բարեհունչ ձևերի, մի շարք բա»
սերում կենդանի լեզվից էպես տարբերվող արտասանության
 խրախուսումները՝ որ[ջ] (**190**), միր[գ] (**197**), Նապո[յ]ոն, ո[յ]ալիզ, **Ա**
ԱցՍալիզ, չեմա[յ]ոն, ֆել[յ]ետոն (**248**) և այլն: Տրամաբանության ոչ
 մի կանոնի չեն երթարկվում բաղադրյալ հարադրավոր հատուկ ա-
 (ուններում մեծատառերի գործածության վերաբերյալ վերջին փո-
 փոխությունները, օրինակ, այն հիմնավորմամբ, որ իբրև թե Հայկա-
 կան Պար, Բերեհիկեի Վարսեր հարադրավոր անունների երկրորդ
 բաղադրիչները փոխաբերորեն են անված, իսկ Տրդատի թախտ, Ա-
 (յահտա աթոռ, Վայոց ձոր անուններինը ոչ, և որ «Վայոց ձոր առ-
 խարհագրական տեղանունը հարյուրամյակների գործածություն ու-
 հի», որում «ձորը» շարունակում է պահել իր բառային նշանակութ-
 յանը» (**235-238**), և կամ՝ «բացառություն-հավելում է ՀՀ Գիտություն-
 (ւերի ազգային ակադեմիա բառակապակցությունը՝ այդ հաստա-
 տության անվան մեծատառ գրությամբ» (**237**) և այլն:

Լեզվական յարաբանչյուր փոփոխություն բաղադրյալության ի-
 րավումն պիտի ստանա և օրենքի ուժ անի միայն մասնագիտական
 հետևողական ու համակողմանի բնարկումներից հետո: Իսկ հարցի
 վերջնական լուծումը վերապահված է լեզվի օրենսդիր մարմնին:

Այս առիթով գրական հայերենի նորմավորման պատմությունը
 հետաքրքիր և ուսանելի դասեր ունի մեզ մատուցելու: **1936**-ից
ՀԽՍՀ Կենտգործկոմին առընթեր Տերմինաբանության հանձնաժո-
 դովը, որի կազմում էին Աբեդյանը, Անաոյանը, Ղափանցյանը, Ղա-
 րիբյանը, Մանադյանը, Սևակը, առխատանքներին հանախ մաս-
 նակցում էր նաև Մակինցյանը, իր հերթական նիստերից մեկում
 քննարկում է ընդամենը չորս բառի (դիրիժոր, սեժիսոր, պետ, ալ-
 յումին) ոչ ֆմայնացված արտասանության և գրության հարցը: Բա-
 ցակալում էր Աբեդյանը: Ընդհանուր հայտարարի գալուց հետո ո-
 բուում են հարցում անել նաև Աբեդյանին և նրա համաձայնությունը
 առնելուց հետո են միայն նախագիծը համարում ընդունված և գոր-

¹ Տե՛ս .Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006, էջ 204:
 Այսուհետև այս գրքին հղումը՝ շարադրանքում, կնշվի միայն էջը:

ծաղրելի¹: Մեկ այլ օրինակ՝ 1957-ին բաղադրյալ հատուկ անունների ուղղագրության կանոնարկման վերաբերյալ 4 նախագծի հրապարակային ֆեննարկումը տևել է 5 տարուց ավելի, վերամշակված նոր նախագիծը, որը հեղինակել էին Ասոտ Աբրահամյանը և Հովհաննես Բարսեղյանը, հաստատվում է 1963-ին՝ Գուրգեն Սևակի խմբագրությամբ: Նախագիծը աննշան փոփոխություններով գործում է գրեթե մինչև այժմ²:

Այսօր լեզվի պետական տեսչությունում այդ ավանդույթները նույն հաջողությամբ չեն շարունակվում, ասպարեզում չկա հստակ մշակված լեզվաբանականության ծրագիր, չեն ընդունվում գրական լեզվի կանոնարկման անհրաժեշտ որոշումներ, չեն լուծվում տերմինաստեղծման և տառադարձության խնդիրները, չի գործում Հայերենի բարձրագույն խորհուրդը: Հարկադիր այս պարագայության ինչ-ինչ օրյեկտիվ պատճառներ՝ օրենսդրական դաժտի չգոյություն, սահմանափակ լիազորություններ և իրավունքներ, համագործակցության պակաս, անհրաժեշտ գործիքակազմի բացակայություն և այլն, հազիվ թե մեղմացնեն այդ հիմնարկի մասնագիտական անգործության մեղքի բաժինը:

Հարցի լուծման ճանապարհները տանում են մեկ հանգրվանի, բավարար իրավասություններով օժտել լեզվի տեսչությանը, վերականգնել Հայերենի բարձրագույն խորհուրդը և զբաղվել արդյունաբեր աշխատանքով:

2. Արևելահայերեն-արևմտահայերեն առնչություններ: Հարցը ունի շուրջ 150 տարվա արծարծումների տխուր, բայց ուսանելի պատմություն: 19-րդ դարի կեսերին հայերենի երկու տարբերակների տարանջատ ձևավորման գործում իր մեղսակցության որոշակի բաժինը ունեցողներից Ստեփանոս Նազարյանցը (համեմայն դեպս, Նալբանդյանին և Նազարյանցին այդպիսի մեղքեր են վերագրում Անտոյանը, Աբեղյանը, Չոպանյանը, Գազանճյանը և էլի ուրիշներ) հայտարարում էր, որ պատմական ճակատագրի բերումով ունենք մեկ լեզվի երկու տարբերակ, մի ծաղկի փոխարեն՝ երկու ծաղիկ, բայց դրանից բնավ չպետք է նեղսրտել: 1898-ին երիտասարդ Մանուկ Աբեղյանի նախագիծը՝ իրար մերձեցնելու հայերենի երկու տարբերակները³, մնաց թղթի վրա ընդամենը հարուցելով արևմտահայ մտավորականների բուռն և արդարացի դժգոհությունը: 20-րդ դարի սկզբներին Արշակ Չոպանյանի գրավոր խոսքում արևելահայերենի տարրեր գործածելու փորձերը դույզն արդյունքի չհանգե-

¹Տե՛ս Ս. Գյուլբուզադյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր., 1973, էջ 374:

²Տե՛ս նույն տեղը, էջ 384-390:

³Տե՛ս Մ. Աբեղեան, Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը, - «Արարտես, էջմիստի», 1897, թիւ 9-10, էջ 424-431, թիւ 11-12, էջ 494-503:

սիւ 1911-ին Պոլսի «Ազատամարտ» շաբաթաթերթի բացած բանու-
ՔԼ րին մասնակցում էին ժամանակի շատ նանաչված մտավո-
րականներ՝ Դ. Վարուժան, Հ. Օճական, Ղ. Աղայան, Ա. Ծիրվանզուպե,
Լ Հարությունյան, Ռ. Զարգուսյան, Ա. Չոպանյան, Վրթ. Փլսփազյան
և ուրիշներ, չունեցավ որևէ գործնական արդյունք: Բայց եղան տե-
սական լուրջ հարցադրումներ ու համոզիչ հաստատումներ: Բազ-
մաթիվ կարծիքներից էս կրերեն ընդամենը երկուսը.

Միֆայել Վարանդյան. «Մի շոգեկառք,- գրում է նա, Ըարսից
Կարում, Բզդիրից դեպի Վան՝ աւելի գործ կը կատարէ լեզուների
միացման տեսակետից, քան մեր բոլոր գրագէտների բաղձանքնե-
քի»¹:

Հակոբ Օճական. «Լեզուները կ'ապրին մեր հասոդութենէն ա-
ԼԱՄԴ ...Զուլում մը ոչ կարելի է, ոչ ալ փափաքելի: ...Միացումի այդ
<ս(ւկարելիութիւնը երբեք վրդովիչ ալ չէ: Երկու բարբառները իրար-
Ա զանազանող տարբերութիւնը այնքան թեթեւ է, որ գրագէտնե-
(911 (ւ ինքնատիպութիւնը կը բաւէ այդ անջրպետը լեցնելու: Ահարո-
էւհանը կը սիրենք, վասն զի իր մէջ գրական կարգ մը գեղեցկու-
ք)»² Օր նոյնիսկ մութի մէջ կը թողուն լեզուական յարցարումը: Եր-
փանզուպեի խոռոնակ լեզուն անգամ հաճոյքով կը ներենք իրեն,
փասն զի իր գրքերը մեծ չափով գրականութեան շահեկանութիւնը
ՄԻ ԿԵՆ Ու կը հաւատամ թէ Պոլսահայերուն լաւագոյն գրողները կը
հացկցուին ու կը սիրուին Կովկասի մէջ ալ»²:

1 Եզվական այդ բանավեցից անցել է հարյուր տարի: Խնդիրը
մամանակ առ ժամանակ և հանախ սուբյեկտիվ շարժառիթներով
հետվում է քննարկումների հրապարակ: Տասնամյակները, սա-
(ՍԻՆ, և" քաղաքական, և՛ գուտ լեզվական առումով, շատ բան չեն
փոխել: Պատմության փորձը և արևմտահայերենի ուսումնասիրութ-
լուր գրադվելու երկարամյա փորձառությունը ինձ առիթ են տալիս
հանվելու հետևյալին.

1. Ուղղագրական և այլ կարգի տարբերությունները իրական
•ւատնառ չեն անջրպետի և փոխադարձ անհասկանալիության:

7 Վտանգված է արևմտահայերենի գոյությունը: Պատնառները
և տվճաթիվ են և պարտադրող. Ափյուռփի երբեմնի հայաշատ և կեն-
ւանակ համայնքների աստիճանական տարրալուծում, բանիմաց
ուսուցիչների պակաս, մեկ կենտրոնից ղեկավարվելու չգոյություն,
•էԿփ/խող լեզուների ազդեցություն, սփյուռփահայ երիտասարդու-
հուն շրջանում ընթերցանության և հայերենի նկատմամբ հե-
•ոսփրթրության գզալի անկում և էլի բազմաթիվ գործոններ: <ա-

• և iquimiudiupin», Կ. Պոլիս, 1911, էջ 692:
ՎՈՂՕ սԱյդուս, էջ 733-734:

մաշխարհայնացման արդի պայմաններում հայրենի հողից տարագիր եղած հանրության համար, երբ վերջինս անմիջական ու անսնձնուբար սերտորեն չի կապված բնաշխարհի հետ, երբ օտար միջավայրը և արտաշխարհի հասարակական-ֆազիսական գարգացումները գնալով դառնում են պարտադրող, ազգային լեզվի և մշակույթի պահպանությունը դառնում է դժվարին խնդիր: Արևմտահայերենի պահպանման ու գիտական ուսումնասիրության հիմնական կենտրոն մնում է հայրենիքը:

3. Վստանգված է գրական արևմտահայերենի լեզվական որակը: Արտասանական գույզակերի բազմազանություն, երկակի ուղղագրություն ունեցող բառերի առատություն, էական խզում արտասանության և ուղղագրության կանոններում, օտար բառերի տառադարձության անորոշ ու բարձիթողի վիճակ, անենաթողություն ֆերականական տարբերակների գործածության մեջ, պարբերական մամուլի լեզվի անվերահսկելի կացություն, այս բոլորը միասին գրական արևմտահայերենի պահպանման համար ստեղծում են իրապես ծանր պայմաններ: Նորմավորման շրջանից ի վեր՝ 20-րդ դարասկզբից սկսած, գրական արևմտահայերենը լիբանանահայ մտավորականի խոսքերով Սփյուռքում երբեք այսֆան «լուսնուքեան ու անիրութեան մատնուս» չի եղել:

4. Խնդրի լուծումը արդյունաբեր կարող է լինել միայն հայրենիքի և Սփյուռքի համատեղ ու նպատակադիր ջանքերով: Եվ այս տեսանկյունից հայաստանցի մտավորականիս համար առնվազն անհասկանալի է, որ Կիլիկիո կարողիկոս Արամ Առաջինի նախաձեռնությամբ վերջերս ստեղծված Արևմտահայերենի պատկանության հանձնաժողովը, որում ընդգրկված են սփյուռքահայ մի քանի տասնյակ մտավորական գործիչներ, չունի հայաստանաբնակ որևէ անդամ:

5. Մերձեցման է տանում լեզվի բնականոն զարգացումը որպես հետևանք և արդյունք մշակութային, տնտեսական և այլ կարգի մերձեցումների:

6. Մերձեցման հնարավորություններ առկա են լեզվի բոլոր մակարակներում և հատկապես բառապաշարում, պարզապես պիտի կարողանալ օգտվել այդ հնարավորություններից: Սակայն դա պիտի անել առանց ավելորդ ոգևորվածության և անիրագործելի նախազմունքների: Ի՞նչ հեռակար ունի միասնական հայերենի ստեղծման անգիտական գաղափարը կամ Երևանում արևմտահայերենի համալսարան բացելու առապելը, երբ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում արևմտահայերենի մասնագիտացված խմբի ձևավորումն իսկ խնդիր է, և դա ընդամենը մեկ պարզ պատճառով, ցանկացողներ չկան: Երբ սփյուռքահայ մտավորականների գավակները այսօր գերադասում են կրթություն ստանալ ոչ թե Երևանի պետա-

Կան համալսարանում, այլ եվրոպական բուհերում: Երբ Սփյուռքում "ԲՍՅՕՐ դպրոցներ են փակվում, երբ հայ երեխան ընտանիքում հա- (lifMi >ի խոսում, պոլսահայության ընդամենը 15-18 տոկոսն է այսօր >ուլորդակցվում արևմտահայերենով¹, վերջին երեք տասնամյակում կիսով չափ կրճատվել է պոլսահայ վարժարանների և աշակերտների թիվը, լիբանանահայ 14 հազար դպրոցահասակ երեխաներից ըն- վսւլ!ենը 7 հազարն է հաճախում հայկական դպրոցներ²:

Հարցի անառիթ ու անպատճառ ֆենարկումները էապես նվա- ւյիւյնում են դրա կարևորությունը, բթացնում լսարանի ուժադուր- յունը, ծնում վտանգավոր գիմակայություն:

7. Պահպանենք և մշակենք արևմտահայերենը, ֆանգի արևմ- տահայերենը մշակութային անգերագանցելի հարստություն է, ազ- վսի(յ ինֆնության պահպանման կարևորագույն գործիք Սփյուռ- ՄՄՁՕ Ի Հայաստանում:

Բանալի բառեր - լեզվափոփոխականություն, կանոնարկում, Հայերենի բարձրագույն խորհուրդ, որոշում, լեզվական կանոն և գարգացում, արևմտահայերեն-արևելահայերեն առնչություններ, սև<1|ային ինֆնություն:

YURI AVETISYAN. *Standardization as Linguistic Policy: Affiliations of Eastern and Western Armenian.*

Dialects in literature, as well as normalization issues, must always It* Um focal point of a specialist's attention. The High Commission of Ammnlan Language has a vital role in this matter. The Commission, huwnver, has been suffering from unemployment for a decade. One of Mm primary directions of a modern linguistic policy would be the study iff (he affiliations of Eastern and Western Armenian. The safekeeping ԻՖ Wnstern Armenian and the gap between Eastern and Western Amionlan literatures could be bridged through efforts and well- •iim lured work in both the diaspora and Armenia.

Keywords: linguistic polity, standardization, Council of language jMilhy, Armenia-Diaspora cooperation, Eastern and Western Antiunion correlations, issues of convergence, national identity.

¹ Առակագրական այս տվյալները վերցված են Պոլս Հայոց պատրիարքարանից, ուսացյալաՕ միությունից և «կարգ մը վարժարաններէն»: Տէ ս Ս. Գոլումենեան, 4իի»իկ Օր ստամպուլահայ վարժարաններու իրականութեան, Ստամպուլ, 2010, էջ

•1ա|կական ինֆնության խնդիրները 21-րդ դարում. Գիտաժողովի նյութեր», Եր., #օն iy 30-35: